ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 3
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 7
4. ՓՈԽԱՐԺԵՔ 8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 9
   5.1. Բյուջեի եկամուտները 9
   5.2. Բյուջեի ծախսերը 11
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 12
   5.4. Պետական պարտք 12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 13
   6.1. Գնաճ 13
   6.2. Ավանդներ 14
   6.3. Վարկեր 15
   6.4. Դրամական փոխանցումներ 17
7. ԱՄՓՈՓՈՒՄ 17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականին ՀՀ տնտեսությունում շարունակվում են պահպանվել նախորդ տարվա բարձր աճի ապահովման հիմնական գործոնների ազդեցությունները, ինչի արդյունքում գրանցվում է տնտեսական ակտիվության բավական բարձր աճ: Սակայն, պետք է նշել, որ նախորդ տարի տնտեսական աճն արագացնող գործոնները (դրական արտաքին շոկերը) սկսեցին արտահայտվել մակրոտնտեսական ցուցանիշներում ապրիլ-մայիս ամիսներին, մինչդեռ 2023թ. հունվար-փետրվարը համեմատվում է նախորդ տարվա բնականոն (առանց դրական շոկի) ամիսների հետ: Այս իրավիճակը հաշվի առնելով՝ կարող ենք նշել, որ գրանցվող աճերը հետագա ամիսներին կսկսեն դանդաղել, քանի որ կսկսենք համեմատել արդեն նախորդ տարվա այն ամիսների հետ, որոնցում առկա են դրական շոկի ազդեցությունները: Այնուամենայնիվ, 2023թ. փետրվարին գրանցվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) արագացում, որը կազմել է 11.3%՝ հունվարի 10.5%-ի դիմաց: Կուտակային՝ հունվար-փետրվար ամիսների ՏԱՑ-ը կազմել է 10.9%, որը, սակայն, ցածր է նախորդ տարվա նույն ցուցանիշից շուրջ 0.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2023թ. հունվար-փետրվար ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ի աճին կազմել են 7.0 և 5.4 տոկոսային կետ: Շինարարության ճյուղն էականորեն ավելի փոքր նպաստում է ունեցել՝ շուրջ 0.6 տոկոսային կետ, իսկ արդյունաբերության նպաստումը գրեթե զրոյական է եղել:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2023թ. հունվար-փետրվար ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում աճի տեմպը դանդաղել է՝ առանց այդ էլ ցածր մակարդակից: Ընթացիկ տարվա փետրվարին արդյունաբերության աճը կազմել է 0.7%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.7 տոկոսային կետով: Հունվար-փետրվար ամիսների աճը կազմել է բավական ցածր՝ 1.0%՝ զգալիորեն զիջելով ՏԱՑ-ի աճին:

Արդյունաբերության հունվար[1] ամսվա 1.4% աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 7.3% աճով, որի

[1] Արդյունաբերության փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

նպաստումը կազմել է 3.7 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում շարունակվել են անկման միտումները: Հունվարին անկումը կազմել է 3.4%՝ ընդհանուր արդյունաբերության աճին հակազդելով 1.0 տոկոսային կետով: Անկում է գրանցվել նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում, ինչն արդյունաբերության աճը դանդաղեցրել է 1.4 տոկոսային կետով, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում գրանցվել է 7.5% աճ՝ արդյունաբերության աճին նպաստելով 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում նկատվում է աճի տեմպի արագացում: Շինարարության աճն ընթացիկ տարվա փետրվարին կազմել է 13.9%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.7 տոկոսային կետով, ինչի հաշվին հունվար-փետրվար ամիսներին կուտակային աճը ևս արագացել է՝ կազմելով 13.2%:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտի աճը փետրվարին դանդաղել է, սակայն մնացել է բավական բարձր մակարդակում: 2023թ. փետրվարին ծառայությունների աճը կազմել է 21.2%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 4.7 տոկոսային կետով: Հունվար-փետրվար ամիսների կուտակային աճի ցուցանիշը կազմել է 23.5%՝ մնալով տնտեսության ամենաարագ աճող ճյուղը:

Ծառայությունների ոլորտում, ըստ հունվար ամսվա տվյալների[2], բարձր աճին առավելապես՝ 10.7 տոկոսային կետով նպաստել է «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտի շուրջ 52.5% աճը: Էական նպաստում են ունեցել նաև «ֆինանսական և ապահովագրական գործունեության» ոլորտի, «տրանսպորտի» և «կացություն և հանրային սնունդ» ենթաոլորտների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 7.6, 3.9 և 1.8 տոկոսային կետ:

[2] Ծառայությունների ոլորտի փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում նույնպես արձանագրվել է բարձր աճ, որի տեմպն արագացել է փետրվարին: Առևտրի ոլորտում 2023թ. փետրվարին աճի տեմպը կազմել է 18.2%, իսկ հունվար-փետրվար ամիսների աճը՝ 18.0%: Այս բարձր աճերը հիմնականում պայմանավորված են բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարվա նույն ամիսներին ՌԴ քաղաքացիները դեռևս չէին տեղափոխվել Հայաստան:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Ապրանքների արտահանման ծավալների բարձր աճը նույնպես պայմանավորված է բազայի էֆեկտով, որն ավելի է ուժգնացել փետրվարին: Արտահանման ծավալի աճը 2023թ. հունվար-փետրվարին կազմել է 96.4%, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախորդ տարվա նույն ամիսներին

վերարտահանման երևույթը նման մեծ չափեր չուներ: Ընդ որում, վերարտահանման ապրանքատեսակների կազմում էական դեր է ստանձնել ավտոմեքենաների արտահանումը, որի ներմուծման և արտահանման ծավալները չափազանց մեծ աճեր են գրանցում: Հետագա ամիսներին, երբ բազայի ազդեցությունը չեզոքանա, կարելի է ակնկալել արտահանման աճի տեմպի դանդաղում:

Հարկ է նշել, որ արտահանման հունվար ամսվա ցուցանիշները ՀՀ ՎԿ կողմից էականորեն վերանայվել են, ինչի արդյունքում շուրջ 2.3 անգամ աճը դարձել է 79.7% աճ:

2023թ. հունվար ամսվա[3] արտահանման՝ նախկինում հրապարակված 2.3 անգամ աճը հիմնականում պայմանավորված է եղել ավտոմեքենաների՝ «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի արտահանման շուրջ 97 անգամ աճով (նախորդ տարվա հունվարի 2.0 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն 2023թ. հունվարին արտահանման ծավալը կազմել է 190.8 մլն ԱՄՆ դոլար), որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 75.7%: Արտահանման աճին էական նպաստում են ունեցել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 20.7 և 13.0 տոկոսային կետ:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման աճի տեմպը 2023 թվականին նույնպես բավական բարձր է եղել, սակայն ունեցել է դանդաղման միտում: 2023թ. փետրվարին ներմուծման

[3] Արտահանման փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ծավալը նախորդ տարվա փետրվարի համեմատ աճել է 62.3%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով շուրջ 11 տոկոսային կետով: Հունվար-փետրվար ամիսների ներմուծման ցուցանիշը կազմել է 67.4%՝ հունվարի համեմատ դանդաղելով 5.9 տոկոսային կետով:

Ներմուծման հունվար ամսվա ցուցանիշը ևս վերանայվել է ՀՀ ՎԿ կողմից, սակայն այս անգամ դեպի վեր՝ 72.5%-ից դառնալով 73.3%:

Ներմուծման բարձր աճը 2023թ. հունվարին[4] հիմնականում պայմանավորված է եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծման բարձր աճերով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են 27.9 և 25.2 տոկոսային կետով: Այս նույն ապրանքները նաև նպաստել էին արտահանման աճին, ինչը խոսում է վերարտահանման երևույթի շարունակության, նույնիսկ ավելի մեծացման մասին:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ[5]

2023 թվականին անվանական աշխատավարձի աճի տեմպը շարունակել է արագանալ: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2023 թվականի հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 22.0%-ով՝ կազմելով 249,278.0 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 25.6%-ով՝ կազմելով 274,961.0 դրամ: Սակայն պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է զգալիորեն ավելի ցածր՝ 9.7% տեմպով և կազմել է 189,450.0 դրամ:

Աշխատավարձերի աճին զուգահեռ՝ 2023 թվականը սկսվել է բարձր գնաճի շարունակությամբ, որը հունվարին կազմել է 8.1%: Այդ պայմաններում, իրական աշխատավարձի աճը եղել է զգալիորեն ավելի ցածր՝ ընդհանուր տնտեսությունում 12.9%, ոչ պետական հատվածում՝ 16.2%, իսկ պետական հատվածում՝ ընդամենը 1.5%: Ինչպես նշել ենք նախորդ վերլուծություններում, պետական հատվածում իրական աշխատավարձերի ցածր աճը բավական խնդրահարույց երևույթ է, քանի որ աշխատողների զգալի հատվածի համար (որոնց թվում ներառվում են նաև ուսուցիչները և պետական հաստատություններում աշխատող բժիշկները) կենսամակարդակի էական փոփոխություն տեղի չի ունենում: Ավելին՝ բարձր

[4] Ներմուծման փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:
[5] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

տնտեսական աճի պայմաններում այդ հատվածի կենսամակարդակը հարաբերականորեն նվազում է, քանի որ ստեղծված արդյունքը հիմնականում բաշխվում է մասնավոր հատվածում բարձր աշխատավարձ ստացողներին և կապիտալի սեփականատերերին:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2022-2023թթ. հունվարին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում), և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)







ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման տեմպը 2023թ. շարունակում է արագանալ: ՀՀ դրամի արժևորված դիրքը պահպանվել է նաև 2023թ. սկզբին: Հունվար-փետրվար ամիսներին փոխարժեքի արժևորման տեմպը շարունակել է արագանալ: Այսպես, ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2023 թվականի հունվար-փետրվարին արժևորվել է շուրջ 21.9%-ով, եվրոյի նկատմամբ՝ 28.5%-ով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 12.6%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը փետրվարին դանդաղել է՝ էապես ցածր լինելով նախորդ տարվա նույն ամիսների աճերից: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. փետրվարին աճել են 5.1%-ով՝ հունվարի համեմատ դանդաղելով 9.9 տոկոսային կետով: Հունվար-փետրվար ամիսների աճը կազմել է 10.5%, որը էապես ցածր է նախորդ տարվա նույն ամիսների 22.7% աճից: Բյուջեի եկամուտների աճի դանդաղումը պայմանավորված է ինչպես հարկային եկամուտների աճի տեմպի նվազմամբ, այնպես էլ այլ եկամուտների 17.9% և պաշտոնական դրամաշնորհների 78.5% նվազումներով:

Հարկային եկամուտների աճի տեմպը նվազել է՝ 2023թ. հունվար-փետրվարին կազմելով 12.7%՝ հունվարի 15.3%-ի համեմատ նվազելով 2.6 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա հունվար-փետրվարի համեմատ՝ 7.6 տոկոսային կետով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է եկամտային հարկի (աճը՝ 16.4%), ԱԱՀ-ի (աճը՝ 8.2%) և շահութահարկի (աճը՝ 65.7%) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել է համապատասխանաբար 4.9, 3.2 և 2.0 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին բացասական նպաստում է ունեցել պետական տուրքերի 54.2% նվազումը, որը հարկերի աճին հակազդել է 3.3 տոկոսային կետով: Եկամտային հարկի բարձր աճը պայմանավորված է նվազագույն աշխատավարձերի բարձրացմամբ, իսկ շահութահարկի աճը՝ նախորդ տարվա բարձր շահույթների ձևավորմամբ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2022թ. հունվար-փետրվար		2023թ. հունվար-փետրվար	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**20.3**	**20.3**	**12.7**	**12.7**
ԱԱՀ	25.0	9.5	8.2	3.2
Շահութահարկ	17.6	0.5	65.7	2.0
Եկամտային հարկ	1.5	0.5	16.4	4.9
Ակցիզային հարկ	51.4	3.2	12.9	1.0
Շրջանառության հարկ	28.3	1.0	32.9	1.2

Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	-456.1	-3.0	-81.3	1.6
Մաքսատուրք	11.6	0.6	-21.1	-1.0
Սոցիալական վճար	46.7	1.5	47.8	1.8
Այլ հարկային եկամուտներ	48.8	1.3	35.8	1.2
Պետական տուրք	255.3	5.2	-54.2	-3.3

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճը 2023թ. հունվար-փետրվար ամիսներին արագացել է: Ընդհանուր ծախսերի աճը կազմել է 6.4%՝ հունվարի համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով: Ծախսերի աճը պայմանավորված է եղել ընթացիկ ծախսերի շուրջ 10.4% աճով, մինչդեռ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (որոնք հիմնականում կապիտալ ծախսերն են) նվազել են 44.6%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին հակազդելով 3.3 տոկոսային կետով: Իհարկե, տարվա երկու ամիսները բավական քիչ են կապիտալ ծախսերի կատարողականի մասին պատկերացում կազմելու համար, սակայն նման ցածր ցուցանիշները արդեն իսկ մտահոգիչ են:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



2023 թվականը սկսվել է պետական բյուջեի հավելուրդով, որը, սակայն, գերազանցում է նախորդ տարվա մեծությունները: ՀՀ պետական բյուջեի ծախսերը ընթացիկ տարվա հունվար-փետրվարին ավելի քիչ են եղել, քան եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ շուրջ 54.5 մլրդ դրամի չափով՝ նախորդ տարվա 40.7 մլրդ դրամի դիմաց: Ընդ որում, ծախսերի քիչ լինելը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի նվազմամբ, ինչը նշանակում է, որ կապիտալ ծախսերի կատարողականի հետ կապված հայտնի խնդիրները կարող են շարունակվել նաև այս տարի:

5.4. Պետական պարտք

2023թ. փետրվարին ՀՀ պետական պարտքի ԱՄՆ դոլարով արտահայտված ծավալը աճել է 15.3%-ով, իսկ դրամով արտահայտված ծավալը նվազել է 6.9%-ով: Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճել է 15.3%-ով, իսկ դրամային արտահայտությամբ նվազել է 6.9%-ով: Այդպիսի զարգացումների հիմնական պատճառը ՀՀ դրամի արժևորումն է: Այդ պատճառով, թերևս ճիշտ կլինի դիտարկել դրամով արտահայտված ներքին (ներքին արժույթով) պարտքը, որը փետրվարին՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 32.4%-ով, և դոլարային արտահայտությամբ արտաքին (արտարժութային) պարտքը, որը նվազել է 5.8%-ով: Այս ցուցանիշները մատնանշում են այն, որ կառավարությունը շարունակաբար մեծացնում է ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում, որը փետրվարին հասել է 43.0%-ի:

2023թ. փետրվարին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են մնալ բարձր մակարդակում: Կարճաժամկետ պարտատոմսերի

տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2023թ. փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ բարձր է եղել շուրջ 2.4 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերինը՝ 2.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը կայունացել է բարձր մակարդակում: 2022թ. վերջին ամիսներին գնաճի տեմպը սկսել էր դանդաղել, սակայն 2023թ. փետրվարին դանդաղման տեմպը չի պահպանվել: Գնաճը կազմել է 8.1%՝ շարունակելով էապես բարձր մնալ ԿԲ թիրախից: ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը հունվար-փետրվար ամիսներին թողել է անփոփոխ:

6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2023թ. փետրվարին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալները զգալի աճել են, սակայն աճի տեմպը դանդաղել է: 2023թ. փետրվարի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 24.8%-ով՝ հունվարի համեմատ դանդաղելով 1.3 տոկոսային կետով: Ավանդների նման աճը բացատրվում է նախորդ տարվա վերջին կուտակված ավանդների պաշարներով, որոնք, սակայն, 2023թ. փետրվարին 2022թ. դեկտեմբերի համեմատ նվազել են շուրջ 1.3%-ով (իսկ ոչ ռեզիդենտների ավանդները՝ 8.2%-ով): Ոչ ռեզիդենտների ավանդների ծավալների աճը փետրվարին բավական բարձր է եղել՝ կազմելով 50.6%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



Ավանդների աճին շուրջ 10.9 տոկոսային կետով դրական նպաստում են ունեցել ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները: Ռեզիդենտների շարքում էական է ձեռնարկությունների ավանդների աճի տեմպը, որը կազմել է 38.9%՝ ընդհանուր ավանդների աճին ունենալով 7.6 տոկոսային կետ նպաստում: Տնային տնտեսություններից ներգրավված ավանդների ծավալն աճել է 13.1%-ով՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով 6.3 տոկոսային կետով:

6.3. Վարկեր

Վարկերի ծավալների աճի տեմպը նույնպես դանդաղել է փետրվարին: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2023թ. փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 5.4%-ով, իսկ 2022թ. դեկտեմբերի համեմատ՝ 1.6%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Վարկերի աճը հիմնականում տեղի է ունեցել ռեզիդենտներին տրամադրված վարկերի 5.3% աճի հաշվին, որն ընդհանուր վարկերի աճին նպաստել է 5.0 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը եղել է ավելի բարձր՝ կազմելով 7.5% և ընդհանուր վարկերի աճին նպաստելով 0.4 տոկոսային կետով: Ի դեպ, հունվար ամսվա համեմատ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճի տեմպը կրկնակի նվազել է:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 16.5% աճով, իսկ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի ծավալը 2023թ. փետրվարին նվազել է 4.1%-ով:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ



Ռեզիդենտներին[6] տրամադրված վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիփոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 29.0%, իսկ

[6] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են

նպաստման չափը՝ 5.1 տոկոսային կետ: Վարկերի աճին էական նպաստում է ունեցել նաև սպառողական վարկերի աճը, որոնց նպաստումը կազմել է 2.2 տոկոսային կետ: Շինարարության, գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալները նույնպես աճել են՝ ընդհանուր վարկերին ունենալով փոքր չափով դրական նպաստում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը[7]



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ բարձր աճերը շարունակվում են նաև 2023 թվականին: 2023թ. հունվարին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 170.2 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա հունվարի 40.5-ի դիմաց)՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով շուրջ 4.2 անգամ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2023 թվականը սկսվել է բարձր տնտեսական աճերով, սակայն դրանք կարող են դանդաղել տարվա ընթացքում: 2023թ. առաջին ամիսների տնտեսական զարգացումները դեռևս համեմատվում են նախորդ տարվա այն ամիսների հետ, որոնք չէին պարունակում դրական արտաքին շոկի (ՀՀ այցելած

միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

[7] Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումների տարբերությունը ԱՄՆ դոլարով:

քաղաքացիների և կապիտալի ներհոսքի) ազդեցությունները: Սակայն, տարվա ընթացքում այդ տարբերությունը կչեզոքանա, ինչը կհանգեցնի ՏԱՑ-ի դանդաղմանը:

2. Արդյունաբերության աճի տեմպն էլ ավելի է դանդաղել՝ շարունակելով վատթարացնել տնտեսության կառուցվածքը: 2023թ. հունվար-փետրվարին արդյունաբերության աճը կազմել է ընդամենը 1.0%՝ դանդաղելով նախորդ ամսվա 1.4%-ից: Միևնույն ժամանակ ՏԱՑ-ը կազմել է 10.9%: Դա նշանակում է, որ արդյունաբերության կշիռը շարունակում է նվազել տնտեսության կառուցվածքում՝ հանգեցնելով տնտեսության պոտենցիալի նվազմանը:

3. Պետական բյուջեի կապիտալ ծախսերի ցուցանիշները նորից մտահոգության տեղիք են տալիս: 2023թ. հունվար-փետրվարին պետական բյուջեի կապիտալ ծախսերը նվազել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ շուրջ 44.6%-ով: Իհարկե, երկու ամսվա ցուցանիշները բավարար չեն կատարողականի վերաբերյալ դատողություններ անելու համար, սակայն նման բացասական դինամիկան արդեն իսկ հուշում է, որ կատարողականի հետ կապված խնդիրներ լինելու են ընթացիկ տարում, և հավանական է, որ նախորդ տարիների կապիտալ ծախսերի ցածր կատարողականները արձանագրվեն նաև 2023-ին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*